ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/193

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Իրտիգ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Իրտիգ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Պողոսյանի, ներկայացուցիչ՝ Է. Բաբայանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92» ծածկագրով գնանշման հարցում, տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13605-2020 գրությամբ «Իրտիգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 02.09.2020թ. թիվ 08.1//23597-2020 գրության հիման վրա, 09.09.2020թ.-ին «Իրտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 09.09.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 09.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/193 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.09.2020թ.-ին և 25.09.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.09.2020թ.-ին:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 02.09.2020թ. թիվ 08.1//23597-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Իրտիգ» ՍՊԸ-ի միջև տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը, 09.07.2020թ կնքվել է N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 ծածկագրով գնման

պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, «Իրտիգ» ՍՊԸ-ին 06.08.2020թ ներկայացվել է կնքված Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելու առաջարկ, որը ըստ Պայմանագրի 7.13 կետի կարող էր կնքվել, եթե տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը սահմանված ժամկետում (մինչև 27.08.2020թ ներառյալ) փոխարինվեր նոր ապահովումով՝ բանկային երաշխիքի ձևով: Սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից որակի ապահովումը բանկային երաշխիքով փոխարինվել է մասնակի:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 7.13 կետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծել է «Իրտիգ» ՍՊԸ-ի հետ 09.07.2020թ կնքված թիվ N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 գնման պայմանագիրը, ինչի մասին ծանուցումը 01.09.2020թ. հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը ուղարկվել է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ ձեռք բերվող գնման առարկայի մասով գնումների պլանը, դրա տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող՝ կայքից արտատպված փաստաթուղթը, «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, կնքված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները, մասնակցի կողմից ներկայացված մասնակի բանկային երաշխիքը, համաձայնագիր կնքելու առաջարկի ծանուցումը, մասնակցի կողմից միջանկյալ ներկայացված գրությունը, և նախարարության պատասխանը, մասնակցին Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Իրտիգ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 17.09.2020թ.-ին Պատվիրատուին ուղղված թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/14120-2020 գրության վերջինս հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 17.09.2020թ գրության կից ներկայացնում եմ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 ծածկագրով գնման ընթացակարգի համար պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված և հաստատված գնման հայտը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 ծածկագրով հրավերը հրապարակվել է 12.06.2020թ և վերջինս կազմվել է մինչև 2020թ հունիսի 6-ը գործող ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) դրույթներին համապատասխան և, որի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ/ պարբերության համաձայն՝ շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում որակավորման ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին, ինչն էլ ամրագրված է ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 ծածկագրով հրավերի 1-ին մասի 10.2-րդ կետում: Իսկ ՀՀ Կառավարության 2020թ. մայիսի 21-ի 778-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) Կարգում կատարված փոփոխությունները վերաբերում են մինչև Որոշումն ուժի մեջ մտնելը սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացներին, հետևաբար նշված գնման գործընթացի սկիզբ է համարվում 18.05.2020թ հաստատված և հրապարակված գնումների պլանում գնման առարկայի ներառված լինելու հանգամանքը, ինչով պայմանավորված և կազմվել է հրավերը:

Ինչ վերաբերում է «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից ներակայացված N EA20/00337 բանկային երաշխիքին, ապա այն ներկայացվել է 07.07.2020թ գրությամբ (կցվում է)՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92 պայմանագրի օրինակների (այսուհետ՝ Պայմանագիր) և համապատասխան փուժանքների հետ միասին: Այնուհետև, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, «Իրտիգ» ՍՊԸ-ին 06.08.2020թ ներկայացվել է կնքված Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելու առաջարկ, որը ըստ Պայմանագրի 7.13 կետի կարող էր կնքվել, եթե փուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը սահմանված ժամկետում (մինչև 27.08.2020թ ներառյալ) փոխարինվեր նոր ապահովումով՝ բանկային երաշխիքի ձևով: Սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել ստորագրված համաձայնագրերը և չի լրացվել բանկային երաշխիքի ձևով ապահովման մնացած մասը: Ի դեպ 20.08.2020թ «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն, ըստ

որի վերջինս խնդրել է ընդառաջել և ընդունել նախապես մասնակի ներկայացված երաշխիքը, որը նախարարության կողմից մերժվել է:

08.09.2020թ «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից, Պայմանագիրը լուծվելուց հետո, կրկին նախարարություն է ներկայացվել պայմանագրի լուծարման գործընթացը չեղարկելու խնդրանքի վերաբերյալ գրություն, որին կից մասնակիցը ուշացումով ներկայացրել է բանկային երաշխիքի մնացած մասը, ինչը, սակայն, Պատվիրատուի կողմից չի ընդունվել:»:

3. <u>«Իրտիգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Իրտիգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13605-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայանալով հրավիրված նիստին բանավոր կերպով ներկայացրել է իր առարկությունները նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից ներկայացված հիմքերի վերաբերյալ և հայտնել, որ գնման գործընթացի մասնակցության ժամանակ գործել են օրենքի նոր փոփոխության դրույթները, որոնք բացառում են իր կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման հանգամանքը:

4. <u>ՍՑ-LO-2020/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Իրտիգ» ՍՊԸ-ի միջև 09.07.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ 7-րդ չափաբաժնի մասով:

ii. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ նախատեսված հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ:

iii. Պայմանագրի 7.9-րդ կետի համաձայն՝ կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

iv. Պայմանագրի 7.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե՝

- պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները.

- պայմանագրի կատարման համար հատկացվում են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով

ներկայացված որակավորման ապահովումը՝ կապալի օբյեկտի համար հատկացված ֆինանսական միջոցների տաս տոկոսի չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով:

Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

v. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

vi. Պատվիրատուն 06.08.2020թ.-ին էլեկտրոնային եղանակով Մասնակցին ուղարկել է կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

vii. Մասնակցի կողմից պայմանագրի հետ միասին Պատվիրատուին է ներկայացվել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 06.07.2020թ.-ին տրամադրված թիվ EA20/00337 համարի բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք)՝ 1 107 580 ՀՀ դրամ գումարի չափով:

viii. Ընթացակագրի հրավերի տեքստը հաստատվել է գնահատող հանձնաժողովի կողմից 12.06.2020թ.-ին:

ix. Հրավերի 2.4 կետի համաձայն՝ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով: Շինարարական աշխատանքի գնման ընդհանուր արժեքը կազմում է 1-ին չափաբաժնի համար՝ 78960070 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 84860240 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 102057680 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 75849220 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 49518740 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի համար՝ 65891510 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի համար՝ 55378570 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի համար՝ 49090250 ՀՀ դրամ:

x. «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ստորագրված համաձայնագիրը:

xi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 01.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 08.1//23436 ծանուցման համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Իրտիգ»

ՍՊԸ-ի միջև 09.07.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 01.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 7.13 կետի ուժով (տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը չի փոխարինվել նոր ապահովումով՝ բանկային երաշխիքի ձևով):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13605-2020 գրությամբ «Իրտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է **շինարարական աշխատանքների** գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված **արժեքի տաս տոկոսին**: Սույն պարբերությամբ նախատեսված շինարարական աշխատանքի գնման արժեքը հրապարակվում է հրավերում:

ՀՀ կառավարության 21.05.2020թ.-ի թիվ 778-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունն ենթարկվել է փոփոխության և շարադրվել հետևյալ կերպ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի

մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքերում սույն պարբերությամբ նախատեսված **ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին, իսկ գնային առաջարկը գնման հայտով սահմանված ծառայության ձեռքբերման նախահաշվային արժեքից, որը հրապարակվում է հրավերով, պակաս լինելու դեպքում՝ նախահաշվային արժեքին**:

ՀՀ կառավարության 21.05.2020թ.-ի թիվ 778-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 06.06.2020թ.-ին) սահմանվել է, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը բանկային երաշխիքի կամ տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումները ենթակա են համապատասխանեցման սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-օրյա ժամկետում:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Իրտիգ» ՍՊԸ-ի միջև 09.07.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92» ծածկագրով պետական գնման Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ նախատեսված հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ:

Ընթացակագրի հրավերի 2.4 կետով սահմանվել է, որ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով, որը 7-րդ չափաբաժնի համար կազմում է՝ 55 378 570 ՀՀ դրամ:

Պատվիրատուն 06.08.2020թ.-ին էլեկտրոնային եղանակով Մասնակցին ուղարկել է կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

Մասնակցի կողմից պայմանագրի հետ միասին Պատվիրատուին է ներկայացվել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 06.07.2020թ.-ին տրամադրված թիվ EA20/00337 համարի բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք)՝ 1 107 580 ՀՀ դրամ գումարի չափով:

«Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ստորագրված համաձայնագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 01.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի

միակողմանի լուծման մասին թիվ 08.1//23436 ծանուցման համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Իրտիգ» ՍՊԸ-ի միջև 09.07.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/92» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 01.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 7.13 կետի ուժով (տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը չի փոխարինվել նոր ապահովումով՝ բանկային երաշխիքի ձևով):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 21.05.2020թ.-ի թիվ 778-Ն որոշմամբ սահմանված դրույթները, այն է՝ բանկային երաշխիքի կամ տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումները չեն համապատասխանեցվել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության փոփոխություններին, որի պարագայում Մասնակիցը պետք է ներկայացներ, ոչ թե Հրավերի 2.4 կետում սահմանված շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսի չափով որակավորման ապահովում, այլ՝ սույն դեպքում, գնման հայտով սահմանված ծառայության ձեռքբերման նախահաշվային արժեքի չափով, քանի որ Մասնակցի գնային առաջարկը ավելի պակաս էր գնման հայտով սահմանված ծառայության ձեռքբերման նախահաշվային արժեքից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ թե մինչև ՀՀ կառավարության 21.05.2020թ.-ի թիվ 778-Ն որոշմամբ սահմանված Կարգի դրույթների փոփոխությունները և թե թիվ 778-Ն որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ 06.06.2020թ.-ին, սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի նկատմամբ կիրառելի են նշված որոշմամբ սահմանված բանկային երաշխիքների որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխանեցման դրույթները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն դեպքում Պատվիրատուի կողմից դրսևորած անգործությունը հանգեցրել և նպաստել է Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ (լիարժեք) կատարելուն, որպիսի պարագայում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13605-2020 գրությամբ «Իրտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/193 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**